

«խարրի Իսրայել Նաբանի, Սրիբայեն, երկուքն ալ տպագրիչ: Կերսոն մինչեւ 1530 Կ. Պօլ-
«սոյ մէջ ի գործ կը դնէ այդ արուեստը զոր ապա իր գլխակները կը տարածեն Օսմ. Տէրու-
«քեան նշանաւոր քաղաքները: Ատոնցմէ մին կը հաստատուի Սէլանիկ (*) ուր շատ մը տպա-
«գրութիւններ կ'ընէ մեծ յաջողութեամբ: — Ի սկզբան, Թուրքիոյ տպագրիչները — միշտ Հրեայ
«— Պալազիա Բ.ի իշխանութեան ատեն կը տպագրէին ծածուկ, որովհետեւ նոյն Սուլթանն
«իր երկրին մէջ այդ արուեստին մուտքը չէր բոյլատրեր. հակառակ գործողներ մահուամբ
«կը պատժուէին: — Յաջորդը՝ Սէլիմ Ա. արտօնութիւններ կը շնորհէ, այնպէս որ գրականու-
«րիւնը սիրող սոյն կայսեր օրով բազում գիրքեր յոյս կը տեսնեն: Սակայն Սէլիմ Ա. իր հօր-
«մէն դրուած արգելքի հրովարտակը 1515 ին կը վերանորոգէ: — Թուրքիոյ մէջ իրեն տպագր.
«արտադրութիւն կրնանք հաշուել 1490 ին դրոշմուած **Ներայեցոյ պատմութիւն** մը՝ Եօսէֆ
«պէն Կօրիօմի ձեռամբ, նաեւ ուրիշ գիրքեր 1492, 1500, 1506, 1509, 1512, 1515, 1598 ին.
«քրականներուն: — Բայց ասանկ նեղ դրութեան ժամանակներուն համար ի Թուրքիա տպա-
«գրական կարեւորագոյն երկը կը սեպուի Pentateucul poliglote 1546 ին, որմէ օրինակ մը
«կը գտնուի Վեննայի Կայս. Մատենադարանը: Հետեւաբար անհիմն է Գալիմար Բարատօրու-
«լօի կարծիքը թէ հազիւ 1738 ին տպագրութիւնը Տաճկաստան մտած ըլլայ: — 1726 ին, Սուլ-
«թան Ահմէտ Բ.ի օրով, տպագրութեան արգելքը կը վերցուի (Հիմրէի ՎՄԻ բուին): — Ազրիա-
«նուպօլիս տպագր. մամուլը կը հաստատուի 1534 ին, միշտ Հրէից ձեռքով, իսկ Սէլանիկ՝ ա-
«ւելի կանուխ, 1515 ին: — Կ. Պօլսոյ Յունաց Պատրիարքարանը 1625 ին՝ Գիրիշ Լուքարիս
«պատրիարքին օրով՝ օծուած կ'ըլլայ յոյն տառերով սեպմ. տպարանով մը, զոր կը վարէ
«Քէֆայօնիացի Նիկողիմոս Մէրաքսա. սակայն իր աշխատութիւնները ձիգվիրներու կողմէ ան-
«յաջողութեան կը մատնուին: — 1698 ին **ՎԵՆԵՏԻԿԷՆ** կը բերուին **մամուլ** մը **և հայ տա-**
«**պագր. օրոնք ՆԷՄԻՅԷՐԻՆԵՐՈՒ Կողմէ աւարի կը տրուին:** [Երկտողիս ենթագծումը մեր
«կողմէ եղած է]: — Առաջին բուրք լրագիրը յոյս կը տեսնէ 1831 ին»:

Շահնեկան դրուագներ չեն պակսիր Գեորգ Եօաննէքուի գիրքէն բարգմանաբար մէջ բե-
րուած այս հատուածին մէջ: Մեզ համար ամենէն հետաքրքրականն է ճակատագիրը հայերէն
այդ տառերուն որոնք իրեն մեղապարտ առարկաներ՝ կ'ենթարկուին խուժուած Եփեսիցիներու
վանդալականութեան: — Այդ բուականէն ալ առաջ, խաւարամիտ և նախապաշարեալ Ստան-
պօլցիներու հալածանքին հետեւանքն է անկասկած, որ Արգար Դպիրի Պօլիս ոտք կոխելէն
(1567) մինչեւ Երեմիա Չելեպի (1677), գրեթէ **հարիւր տասը տարուան** վերիարի դադար մը
կը տեսնենք Պօլսանոյ տպագրութեան: — Դառնանք հիմա Արգար Դպիրի և իր բազմաթիւ
յաջորդներուն, միշտ ժամանակագրական կարգը յարգելով:



2.6 **Արգար Դպիր** 1567 ին իր տպագրական կազմաներով Խոպլայէն կը ժա-
մանէ Կ. Պօլիս՝ ուր կը ձերբակալուի, յետոյ անմեղութիւնը հաստատուելով ազատ կ'արձակուի
և կը հաստատուի **Քէֆէլի քաղ. Ս. Նիկողայոս եկեղեցին** ուր կը հիմնուի **Պօլսահա-**
յոց անգրաքանիկ տպարանը. Տող է որ Խորվիրապցի Առաքել արեղայի ձեռամբ կը դրոշմէ
հետեւեալ 5 գիրքերը: — 1567 ին **Փօֆր Բերականութիւն կամ Այբբենարան**, 1568 ին
Պարգառումար, Ժամագիրք և **Պատարագամատոյց**, 1569 ին **Մառոնց**: — Հ. Գալեմքեար-
եան «Հ. Ամսօրենքի» ի այս տարուան Յուլիսի համարով կը խօսի սոյն Մաշտոցին վրայ՝ զոր
տեսնած է եղբւր Վասիլկանեան Մատենադարանի մէջ, 15 տողնոց երեսներով, տեղ տեղ կրկնա-
գոյն, տպուածքը գէշ և սխալներով լեցուն, սկիզբն ու աւարտը պակասներով՝ որոնք ձեռագի-
րով լեցուած են յետոյ: Յարգելի բանասէրը տառերուն մաշածութենէն կը հետեւցուն որ 1569 ին
տպուած ըլլայ նոյն գիրքը, որուն մէկ էջին նմանահանութիւնն է յաջորդ երեսին պատկերը՝ կի-
սով չափ փոքրցում: — Ճեվանիրճեան Մաղաքիա Դպիր իր ձեռագիր ժամանակագրութեան մէջ
եղև ըստմիայ բացատրութիւնը կը գործածէ ատոնց **տպագրութեան** համար: — «Ս. Նի-

(*) Թերեւս այս անգն ըլլայ Մանմէսական Հրէից նախաձայրը: Ծ. ԹԱՐԳՄԱՆՉԻՆ: — Սէլանիկցի Խա-
լամացու Հրեայ **մամին** կը կոչուին: Ծ. ԹԷ.: